ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
16.01.2024թ. թիվ 1/18-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝
_____ Սիմոն Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ, նաև՝ Որակավորման հանձնաժողով) որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով երկու տարի ժամկետով կազմավորված, ինն անդամից բաղկացած մարմին է:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.

1) փաստաբանների պալատի խորհրդի ընտրած հինգ փաստաբան.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) Վճռաբեկ դատարանից մեկ դատավոր՝ Վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական՝ սույն հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի լիազորությունները, նիստերի գումարման կարգը և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են Փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընդունված որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգով:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.03.2023թ. թիվ 8/11-Ա որոշմամբ երկու տարի ժամկետով կազմավորվել է փաստաբանների պալատի նոր որակավորման հանձնաժողով:

05.04.2023թ. կայացել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի անդրանիկ նիստը:

2023 թվականին կազմակերպված որակավորման քննություններն անցկացվել են երկու փուլով՝ առաջին փուլի ընթացքում հավակնորդները կատարել են գրավոր առաջադրանք, իսկ երկրորդ փուլի ընթացքում պատասխանել են քննատոմսի և Որակավորման հանձնաժողովի անդամների

հարցերին:

2023 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցելու համար դիմում են ներկայացրել ընդհանուր 94 հավակնորդ, որից 85-ը ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրներ, իսկ 9 հավակնորդ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով որակավորման քննություններին մասնակցություն իրավունք ունեցող անձինք:

ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների (այսուհետ՝ Ունկնդիր) քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 23.05.2023 թվականին, որին մասնակցել է 49 հավակնորդ:

Ունկնդիրների քրեաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 24.05.2023 թվականին, որին մասնակցել է 36 հավակնորդ:

Ունկնդիրների քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլն անցկացվել է 08.06.2023 թվականին, որին մասնակցել է 46 հավակնորդ:

Ունկնդիրների քրեաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլն անցկացվել է 08.06.2023 թվականին, որին մասնակցել է 31 հավակնորդ:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով որակավորման քննություններին մասնակցություն իրավունք ունեցող անձանց գրավոր փուլն անցկացվել է 17.07.2023 թվականին, որին մասնակցել է 8 դիմորդ, իսկ բանավոր փուլը անցկացվել է 28.08.2023 թվականին, որին մասնակցել է 1 դիմորդ:

2023թ թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննությունները ընդհանուր հանձնել է 74 հավակնորդ (47 քաղ./31 քր.), չի հանձնել 16 հավակնորդ (5 քաղ./ 11 քր.)

2023 թվականի գարնանը որակավորման քննություններին մասնակելու դիմում ներկայացրած հավակնորդներից 4-ը քննությանը չի ներկայացել:

2023թ. գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը՝		
74 (82,2%) ***հավակնորդ հանձնել է***		***16 (17,8%)*** ***հավակնորդ չի հանձնել***

2023 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունները անցկացվել են երկու փուլով, որին մասնակցելու համար դիմում է ներկայացրել 129 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 02.11.2023 թվականին, որին մասնակցել է 74 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 03.11.2023 թվականին, որին մասնակցել է 55 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլը անցկացվել է 23.11.2023 թվականին, որին մասնակցել է 65 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլը անցկացվել է 24.11.2023 թվականին, որին մասնակցել է 49 հավակնորդ:

Ընդհանուր հավակնորդներից թվով 74 հավակնորդ դիմել է քաղաքացիաիրավական ուղղվածությամբ, իսկ 55 հավակնորդ քրեաիրավական ուղղվածությամբ:

2023 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննությունները հանձնել է 108 հավակնորդ (62 քաղ./ 46 քր.), չի հանձնել 21 հավակնորդ (քաղ.12 / 9 քր.)

2023թ. աշնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը՝		
108 (83,8%) ***հավակնորդ հանձնել է***		***21 (16,2%)*** ***հավակնորդ չի հանձնել***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Հունան Տեր-Վարդանյան

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
քարտուղար՝ Լուսինե Սարգսյան